ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և 2017 թվականի գերակա խնդիրների՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով 1-ին կիսամյակում նախատեսվել էր 3 միջոցառում: Բոլոր միջոցառումները կատարվել են սահմանված ժամկետներում: Նախարարության համար սահմանվել էր թվով 15 գերակա խնդիր, որոնց լուծմանն ուղղված քայլերը հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարվել են:

Ոլորտում ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2017 թվականի հունվար-մայիս ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 170.6 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին 3.5 %-ով, ընդ որում՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կրճատվել է 16.8 %-ով: Բուսաբուծությունում համախառն արտադրանքի նվազումը հիմնականում պայմանավորված է ցածր ջերմաստիճանի պատճառով չտաքացվող ծածկած գրունտից ստացվող արտադրանքի սակավությամբ և տաքացվող ծածկած գրունտից համեմատաբար քիչ արտադրանքի ստացումով և ընդհանուր առմամբ գյուղատնտեսական տարվա որոշակի ետ ընկած լինելով:

Ըստ առանձին ոլորտների կատարված աշխատանքների արդյունքներն են՝

1. **<u>Բուսաբուծություն</u>**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2017 թվականի հունվար-մայիսին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 39.9 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին (16.8 %):

Բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները բնութագրող տվյալները ներկայացվում են ստորև.

(հազ. տոննա)

Մթերքները	**2016թ. 1-ին կիսամյակ**	**2017թ. 1-ին կիսամյակ օպերատիվ**	**2017թ.-ի 1-ին կիսամյակը 2016թ. նույն ժամանակահատ-վածի նկատմամբ, %**
Հացահատիկ և հատիկաընդե-ղենային մշակաբույսեր	4.7	2.0	42.5
Կարտոֆիլ	35.9	26.4	73.5
Բանջարեղեն	82.9	85.6	103.3
Պտուղ և հատապտուղ	57.3	58.8	102.6

2017 թվականին շարունակվել են իրականացվել մի շարք ծրագրեր, որոնք ուղղվել են հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործ-ման մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների և վարկային միջոցների մատչելիության, սերմապահովության մակարդակի բարձրացմանը:

«ՀՀ գարնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման» ծրագրով նախատեսվել է ՌԴ-ից և տեղական սերմարտադրողից ձեռք բերել 1710 տոննա սերմնացու:

2017 թվականին ՀՀ մարզերի հողօգտագործողներին ծրագրով նախատեսված 1230 տոննա գարնանացան գարու, 5 տոննա եգիպտացորենի, 17.5 տոննա առվույտի, 240 տոննա կորնգանի, 200 տոննա գարնանացան ցորենի, 13 տոննա հնդկացորենի, 7 տոննա ոլոռի, 5 տոննա սիսեռի սերմացուներից վճարունակ պահանջարկի հիման վրա 2017 թվականի հուլիսի 7-ի դրությամբ բաշխվել է 667 տոննա գարնանացան գարու, 2.4 տոննա եգիպտացորենի, 5.4 տոննա առվույտի, 59.7 տոննա կորնգանի, 88.5 տոննա գարնանացան ցորենի, 1.8 տոննա հնդկացորենի, 6.5 տոննա ոլոռի և 3.5 տոննա սիսեռի սերմնանյութ:

Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1001-Ն որոշման՝ Ռուսաստանի Դաշնությունից ներկրված 40 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացուն ամբողջությամբ տրամադրվել է ՀՀ 4 մարզի (Շիրակ, Սյունիք, Գեղարքունիք, Լոռի) 14 շահառուի, որոնք 2016 թվականի աշնանը 1:2 փոխհարաբերությամբ վերադարձրել են 80 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու: Համաձայն ՀՀ մարզերից ստացված գրությունների՝ նշված 80 տոննա աշնանացան ցորենի էլիտային վե-րարտադրության սերմացուն ըստ գոտիականության՝ տրամադրվել է 7 և ավելի հեկտար հողատարածք ունեցող սերմնաբուծությամբ զբաղվող 5 մարզի 32 շահառուի՝ 242.3 հեկտար ցանք կատարելու համար՝ 2017 թվականի բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ 160 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու վերադարձնելու պայմանով: Բոլոր շահառուների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր՝ սերմացուների տրամադրման վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 30-ի N 1131-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության 2012-2017 թվականների աշնանացան ցորենի սերմնաբու-ծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման ծրագիրը», որի շրջանակներում 2012 թվականին հանրապետություն է ներկրվել 20 տոննա սուպերէլիտային վերարտադրության սերմացու և տրամադրվել թվով 12 սերմարտադրողների մինչև 2017 թվականը առաջնային սերմնաբուծություն կազմակերպելու նպատակով:

ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 843-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության 2013-2018 թվականների աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման ծրագիրը», որի իրականացման նպատակով հանրապետություն ներկրված 20 տոննա սուպերէլիտային վերարտադրության սերմացու տրամադրվել է թվով 12 սերմարտադրողների մինչև 2018 թվականը առաջնային սերմնաբուծություն կազմակերպելու նպատակով:

Վերը նշված ծրագրերի նպատակն է հանրապետությունում խթանել աշնանացան ցորենի բարձր վերարտադրության (սուպերէլիտային և էլիտային) սերմերի արտադրությունը և Ռուսաստանի Դաշնությունից ներկրված 20-ական տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացուների միջոցով 2017 և 2018 թվականներին էականորեն բարձրացնել աշնանացան ցորենի էլիտային սերմերի ապահովվածությունը:

Իրականացված ծրագրերի արդյունքում ցորենի օգտագործվող սերմացուի 80-85%-ը սորտաթարմացվել է:

Գյուղատնտեսական մշակաբույսերի անհայտ ծագման սերմերի օգտագործման բացառմանը և նոր սորտերի շրջանացմանն է նպաստել **«Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի»** իրականացումը, որի շրջանակներում 2017 թվականի երկրորդ եռամսյակի դրությամբ ստուգվել է գարնանացան գյուղատնտեսական մշակաբույսերի շուրջ 4708 տոննա սերմ, որից՝ հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսեր՝ 3028.5 տոննա, բանջարաբոստանային մշակաբույսեր՝ 0.4 տոննա, արմատապտուղներ և պալարապտուղներ՝ 1405 տոննա և կերային մշակաբույսերի՝ 263.5 տոննա սերմ:

Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս սորտափորձարկումների միջոցով ընտրել և Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների համար երաշխավորել բույսերի նոր արդյունավետ սորտեր, որոնց օգտագործումը կապահովի բարձր և կայուն բերքատվություն:

«Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է քիմիական պայքարի աշխատանքներ իրականացնել գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վտանգավոր վնասատուների՝ մկնանման կրծողների, մորեխների և անտառի վնասակար օրգանիզմների դեմ:

Ծրագիրն իրականացվում է գնահատելով բուսասանիտարական մոնիթորինգի փաստացի արդյունքները:

Հիմք ընդունելով 2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ մարզերի վարելահողերում և բազմամյա տնկարկներում մկնանման կրծողների ակտիվ շարժը (բազմացում),

ինչպես նաև ՀՀ մարզերից ստացված ահազանգերը, 2017 թվականի գարնանը կանխատեսվում էր մկնանման կրծողների բարձր վարակվածություն:

Հաշվի առնելով 2017 թվականին առկա մկնանման կրծողներով վարակվածության բարձր աստիճանը, ծրագրում կատարվել է փոփոխություն և ծրագրով նախատեսված ամբողջ գումարը նպատակաուղվել է մկնանման կրծողների դեմ պայքարի իրականացման համար 10335 կգ ռոտենդիցիդի ձեռքբերմանը, որով պայքար կիրականացվի շուրջ 129.2 հազ. հա վարելահողերում և բազմամյա տնկարկներում:

Բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքներով, անհրաժեշտության դեպքում, մորեխներով վարակված տարածքներում պայքար կիրականցվի նախորդ տարի ձեռքբերված միջատասպան միջոցներով:

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի» շրջանակներում աշխատանքներն սկսել են ապրիլ ամսից: 2017 թվականի հուլիսի 3-ի դրությամբ հետազոտվել է 45 համայնքի գյուղատնտեսական նշանակության 20152 հեկտար հող: Հետազոտվող տարածքից վերցված 6717 հազ. հողանմուշում կատարվել է 16994 հազ. փորձաքննություն: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել է 45 ագրոքիմիական քարտեզ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր:

Ծրագիրը հնարավորություն է տալիս 5 տարվա ընթացքում հանրապետության բոլոր համայնքների հողերը ենթարկել ագրոքիմիական հետազոտման, կազմել խոշոր մասշտաբի ագրոքիմիական քարտեզներ (բույսերի սննդառության համար կարևոր սննդատարրերով ապահովվածության մասին), մշակել պարարտանյութերի խնայողաբար և արդյունավետ օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, որոնք կտրամադրվեն համապատասխան համայնքներին:

Գյուղատնտեսության ոլորտի, մասնավորապես՝ բուսաբուծության առանձնահատկություններով պայմանավորված, ճյուղի ձեռքբերումները հնարավոր կլինի գնահատել գյուղատնտեսական տարվա ավարտից հետո:

2. <u>Անասնաբուծություն</u>

2017 թվականի հունվար-մայիս ամիսներին արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների որոշակի աճ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով նշված ժամանակահատվածում անասնաբուծության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 130.7 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 1.3 %-ով:

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալների օպերատիվ տվյալները 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ներկայացվում են ստորև.

Մթերքները	**2016թ. 1-ին կիսամյակ**	**2017թ. 1-ին կիսամյակ օպերատիվ**	**2017թ.-ի 1-ին կիսամյակը 2016թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ, %**
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	38.0	39.7	104.4
Կաթ, հազ. տոննա	443.1	446.2	100,7
Ձու, մլն հատ	419.6	417.4	99.5

Մշակման և քննարկումների փուլում է **«Հայաստանի Հանրապետությունում 2017-2022 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիրը»**, որի իրականացման արդյունքում հնարավորություն կընձեռվի տարաժամկետ վճարման պայմանով հանրապետության ֆերմերային տնտեսություններին հատկացնել եվրոպական երկրներից ներկրված կաթնատու և կաթնամսատու ուղղության լավագույն ցեղերի կենդանիներից տեղական վերարտադրության արդյունքում ստացված բարձրարժեք տոհմային կենդանիներ:

Ներկայումս հանրապետությունում **կովերի արհեստական սերմնավորման ծառայությունները** շարունակում են իրականացնել «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը և առանձին անհատ ձեռներեցներ: Հաշվետու ժամանակաշրջանում «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի միջոցով կատարվել է շուրջ 15.0 հազար գլուխ կովերի արհեստական սերմնավորում: Աշխատանքները շարունակվում են:

Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու, մսի և մսամթերքի անվտանգությունն ապահովելու, շրջակա միջավայրն աղտոտումից զերծ պահելու, ինչպես նաև բակերում և ճանապարհամերձ տարածքներում կենդանիների մորթը նվազագույնի հասցնելու նպատակով՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից աշխատանքներ են տարվում **կենդանիների մորթը սպանդանոցներում իրականացնելու** ուղղությամբ:

2017 թվականի մարտի 9-ին հաստատվել է «Պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտները և ժամանակացույցը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 10 արձանագրային որոշումը, որի համաձայն առաջին փուլով նախատեսվում է մայիսի 1-ից սպանդանոցային ծագման մսի ձեռքբերումը իրականացնել պետական գնումներով: Ներկայումս հանրապետությունում առկա 28 սպանդանոցներից գործող են համարվում 11-ը, որից 5-ը կառուցվել են Հունաստանի Հանրապետության կառավարության կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից

«Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում հանրապետության 4 մարզի 5 համայնքներում: Ծրագրի շրջանակներում սպանդանոցներ են կառուցվել ՀՀ Կոտայքի մարզի Արզնու և Մայակովսկու համայնքներում, ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենուտ համայնքում, ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքում և ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում:

Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քայլեր է ձեռնարկում ինչպես նշված 5 սպանդանոցների, այնպես էլ նախկինում կառուցված սպանդանոցների բնականոն գործունեությունն աստիճանաբար ապահովելու ուղղությամբ: «ՀՀ-ում 2017–2020 թվականներին սպանդանոցների զարգացման ռազմավարական ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման շրջանակներում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1499-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի N 248-Ն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի նիստով «Պարտադիր սպանդանոցային մորթի կիրառման ոլորտներին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 10 արձանագրային որոշումը:

3. <u>Անասնաբուժության ոլորտ</u>

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրով 2017 թվականին նախատեսվել է կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ՝ 6.21 մլն հատ միջոցառում: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում իրականացվել է 3.66 մլն հատ միջոցառում, որի արդյունքում հանրապետությունում ապահովվել է կայուն անասնահամաճարակային իրավիճակ:

Անասնաբուժական դեղամիջոցների գնման մրցույթների արդյունքում փաստացի տնտեսվել է 31.04 մլն դրամ:

Ծրագիրը շարունակվում է:

4. <u>Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում</u>

Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով շարունակվել է աջակցությունը գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևա-

վորմանը և գործունեությանը: Մասնավորապես, Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-երի) աջակցությամբ 2017 թվականին ստեղծվել է 2 կոոպերատիվ:Ներկայումս մշակվում է գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիր, որը նախատեսվում է ՀՀ կառավարություն ներկայացնել 2018 թվականին:

5. <u>Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում</u>

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով), հայկական դրամով վարկեր, որի 6 տոկոսային կետը սուբսիդավորվել է: Ինչպես վարկի մայր գումարի, այնպես էլ տոկոսադրույքի վճարման համար սահմանվել է արտոնյալ ժամկետ՝ առնվազն 6 ամիս: Վարկերը տրամադրվել են մինչև 2 տարի ժամկետով, առավելագույն մայր գումարը կազմել է 3.0 մլն դրամ: Միայն 2017 թվականի առաջին կիսամյակում տրամադրվել է 8140 միավոր վարկ, 7.2 մլրդ դրամի գումարով:

2017 թվականի երկրորդ փուլում նախատեսվում է ծրագրի մեխանիզմների վերանայում, մասնավորապես այն նպատակաուղղվելու է նաև գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրմանը՝ վարկերի գումարը սահմանելով 3-10 մլն դրամ, վարկավորման ժամկետը կախված ծրագրային ուղղություններից՝ մինչև 5 տարի:

Նախատեսվում է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը իրականացնել այնպիսի չափաքանակով, որ վարկերը տնտեսվարողներին տրամադրվեն 3 % տոկոսադրույքով, իսկ հանրապետության մնացած համայնքների տնտեսավարողների համար 5 % տոկոսադրույքով:

6. <u>Գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացում</u>

«Պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրով նախատեսված է եղել 2110.0 մլն դրամ, ճշտված բյուջեն կազմել է 878.1 մլն դրամ: Տնտեսումը կազմել է 1232.0 մլն դրամ:

2017 թվականին ՀՀ մարզերի հողօգտագործողներին, կազմակերպություններին և ԼՂՀ-ին ծրագրով նախատեսված 34882 տոննա ազոտական, 983.5 տոննա ֆոսֆորական և 903.1 տոննա կալիումական պարարտանյութերից վճարունակ պահանջարկի հիման վրա 2017 թվականի հուլիսի 7-ի դրությամբ բաշխվել է 26723 տոննա ազոտական, 368.5 տոննա ֆոսֆորական և 386 տոննա կալիումական պարարտանյութեր:

Ծրագիրը շարունակվում է:

«Պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար» ծրագրով նախատեսված է եղել 330.0 մլն դրամ, ճշտված բյուջեն կազմել է 171.5 մլն դրամ: Տնտեսումը կազմել է 158,5 մլն դրամ:

2017 թվականին ՀՀ մարզերի հողօգտագործողներին և կազմակերպություններին ծրագրով նախատեսված 5.0 մլն լիտր դիզելային վառելիքից վճարունակ պահանջարկի հիման վրա 2017 թվականի հուլիսի 7-ի դրությամբ բաշխվել է 817.1 հազ. լիտր:

Ծրագիրը շարունակվում է:

7. <u>Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում</u>

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է պտուղբանջարեղենի մթերումների կանխատեսվող ծավալների մոնիթորինգ, ըստ որի 2017 թվականին պտուղբանջարեղենի մթերման պահանջարկը կազմել է շուրջ 60757.0 տոննա բանջարեղեն, որը շուրջ 26.7 հազար տոննայով (43.5 տոկոսով) գերազանցում է նախորդ տարվա ընթացքում կատարված փաստացի մթերման ծավալները:

2017 թվականի հուլիսի 17-ի դրությամբ գյուղատնտեսական մթերք վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 8.1 հազ. տոննա պտուղբանջարեղեն: Այս ցուցանիշը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին 3.1 հազար տոննայով, կամ 62 %-ով:

Գյուղատնտեսական մթերքների իրացմանը նպաստելու համար 2017 թվականի հունիսի 10-ից Երևանում՝ Կասյան փողոցի վերին հատվածում, վերսկսել է գործել գյուղատնտեսական մթերքների տոնավաճառը:

2017 թվականի հուլիսի 18-ի օպերատիվ տվյալներով հանրապետությունից արտահանվել է 61.1 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 28.0 հազ. տոննա պտուղ և հատապտուղ, որից՝ 23.0 հազ. տոննա ծիրան, 228 տոննա խնձոր, 50.0 տոննա դեղձ, 94.6 տոննա կեռաս, 228 տոննա տանձ, 1.0 տոննա խաղող, 26.8 հազ. տոննա բանջարեղեն և 1.6 հազ. տոննա կարտոֆիլ:

8. <u>Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն</u>

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում հանրապետություն է ներմուծվել 6 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել 8 միավոր տրակտոր և 3 համայնքի կոոպերատիվներին՝ 3 միավոր գյուղ. գործիքներ:

2017 թվականին մեկնարկել է **«ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության»**ծրագիրը: Նպատակն է՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը:

Ստորագրվել է հուշագիր ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՓՄՁ ԶԱԿ-ի, ԳՖԿ-ի, «ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի, «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ ՎԿ» ՓԲԸ-Ի, «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի միջև:

Գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն իրականացվում է մասնագիտացված կառույցների կողմից, որոնք կիրականացնեն նաև տեխնիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկում:

Լիզինգի պետական աջակցության պայմաններն են. 20% կանխավճար, լիզինգի տարեկան մինչև 9 % տոկոսադրույք, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորում է, կոմբայնների համար՝ 10 տարի մարման ժամկետ, տրակտորների համար՝ 6 տարի, հավաքիչ-մամլիչների, շարքացանների համար՝ 3 - 6 տարի, այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ 3 տարի մարման ժամկետ:

Ծրագրի շրջանակում 2017 թվականի հուլիսի 12-ի դրությամբ շահառուներին տրամադրվել է 25 միավոր տրակտոր և 32 միավոր այլ գյուղտեխնիկա:

Ծրագիրը շարունակվում է:

«Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնադրման» ծրագիր:

Ծրագրի նպատակն է՝ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը, գյուղատնտեսական տեխնիկայի կայանների գործունեության կազմակերպման ու զարգացման միջոցով:

Գյուղատնտեսական տեխնիկայի վճարունակ պահանջարկ ունեցող տնտեսությունները տեխնիկայի ձեռք բերման համար կարող են օգտվել գյուղատնտեսական տեխնիկայի մատչելի պայմաններով լիզինգի ծրագրից: Մնացած, տեխնիկայի սեփականատեր չհանդիսացող տնտեսություններին սպասարկումները կիրականացվի ստեղծվող գյուղատնտեսական տեխնիկայի կայանի միջոցով:

Պետության կողմից ծրագրի ներդրումը կազմում է 700 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսված ներդման արդյունքում ակնկավում է մշակել շուրջ 16 հազ. հա հողատարածք, որը կհանդիսանա լրացուցիչ եկամտի աղբյուր և կնպաստի գյուղացիական տնտեսությունների կենսապայմանների բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը: Նման կայանի առկայությունը թույլ կտա կազմակերպել կենտրոնացված

սպասարկում՝ ժամանակին և որակով ծառայություններ մատուցելու միջոցով: Ծրագիրը պիլոտային է և նախատեսվում է նման կայաններ ստեղծել բոլոր մարզերում:

Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի հիմնադրման ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի մայիսի 18-ին:

Ծրագրի բուն մեկնարկը նախատեսվում է 2017 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

9. <u>Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում</u>

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և 2017 թվականին գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքների ջրօգտագործողներին պետական աջակցություն տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նպատակն է գյուղատնտեսական հողերի արդյունավետ օգտագործման համար աջակցել գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքների ջրօգտագործողներին, նպաստելով նրանց եկամուտների ավելացմանը:

Մշակվել է նաև «Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ, որն ընթացիկ տարվա հուլիս-օգոստոս ամիսներին սահմանված կարգով կներկայացվի շահագրգիռ նախարարությունների համաձայնեցմանը:

10. <u>Գիտական և խորհրդատվական ոլորտ</u>

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության գիտական կազմակերպություններում կատարվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 3 բազային ֆինանսավորմամբ ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրեր ու 2 պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաներ, որոնց շրջանակներում գիտական հետազոտությունները հիմնականում ընթացել են գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման ուղղությամբ:

«Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2017 թվականի առաջին կիսամյակում տնտեսավարող սուբյեկտներին մատուցվել են հետևյալ

ծառայությունները՝ 509 սեմինար և 425 դաշտային ուսուցում, 10965 խորհրդատվական միջոցառում, 82 փորձացուցադրական աշխատանք, 7 սեմինար-դասընթաց (վերապատրաստումներ) գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների խորհրդատուների և այլ շահառուների համար, 65 ռադիոհեռուստահաղորդում, 250 անուն խորհրդատվական թերթիկների և բուկլետների տպագրում՝ 59155 ընդհանուր տպաքանակով, 77 համար թերթի տպագրում՝ 102300 ընդհանուր տպաքանակով:

11. <u>Գյուղատնտեսական տեխնիկայի տեսչական գործունեություն</u>

Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից իրականացվել են աշխատանքներ գյուղատնտեսական տեխնիկայի գրանցման և պետհամարանիշի հատկացման (168 միավոր), տեխնիկայի վերագրանցման (276 միավոր), տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի (6 միավոր) հատկացման ուղղությամբ: Շարունակվել են աշխատանքները գյուղատնտեսական տեխնիկայի վարչական ռեգիստրի վարման ուղղությամբ:

12. <u>Միջազգային համագործակցություն</u>

Միջազգային կազմակերպություններին անդամակցության շրջանակներում շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ), Կոդեքս Ալիմենտարիուսի Հանձնաժողովի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), Համաշխարհային բանկի, Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության (OIE), Խաղողի և գինու միջազգային կազմակերպության (OIV) հետ, որի արդյունքում գործնականորեն իրականացվել են տնտեսության ագրարային հատվածի զարգացմանը նպաստող ծրագրեր:

Ակտիվ համագործակցություն է ծավալվել մի շարք երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Արգենտինայի, Լիտվայի, Բրազիլիայի, Հնդկաստանի և այլ երկրների գյուղատնտեսության նախարարությունների հետ:

Իրականացվում է Եվրոպական հարևանության **«Աջակցություն գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը»** (ENPARD) ծրագիրը, որի նպատակն է աջակցել գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը, ինչպես նաև գործող կոոպերատիվների բիզնես կարողությունների ընդլայնմանը, տեխնոլոգիաների արդիականացմանը, շուկայավարմանը, ռիսկերի նվազեցման համակարգի ներդրմանը և այլ աշխատանքների իրականացմանը: Ծրագիրն աջակցում է այն արտադրող խմբերին, որոնք ներգրավված են բարձրարժեք մշակաբույսերի (մասնավորապես՝ հնդկաձավար), բարձրարժեք ոչ ավանդական բանջարեղենի, հատապտուղների, մրգի և բարձրարժեք պանրի արտադրության և մշակման մեջ:

2017 թվականին շարունակվել է նաև Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող **Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագիրը**:

13. <u>Լիցենզավորման ոլորտ</u>

Հաշվետու ժամանակաշրջանում լիցենզավորման աշխատանքների շրջանակներում ստացվել են՝

– բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և վաճառք իրականացնելու 42 ծանուցում, որից մեկը մերժվել է,

– բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի բնագավառի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման 5 դիմում, որոնք բավարարվել են,

– թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնելու 3 ծանուցում, որոնք հաշվառվել են ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց ցանկում,

– թորած ալկոհոլային խմիչքների արտադրության բնագավառի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման 4 դիմում, որոնք բավարարվել են,

– խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության բնագավառի ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու 5 ծանուցում, որոնք հաշվառվել են ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց ցանկում,

– Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից արտաքին առևտրի ոլորտի ապրանքների միասնական ցանկում ներառված բույսերի պաշտպանության միջոցների (ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 3808) ներմուծման 46 հայտ - տրամադրվել է 46 լիցենզիա,

– ներկայացվել է անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման հավաստագիր ստանալու 49 հայտ, տրամադրվել է 45 հավաստագիր:

Գանձվել է 237.2 մլն դրամ պետական տուրք:

14. <u>Անտառային տնտեսություն</u>

2017 թվականի 1-ին կիսամյակում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում շաբաթօրյակների միջոցով իրականացվել են անտառմշակույթների հիմնադրում 17.3 հա և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում

17.2 հա տարածքի վրա և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների ագրոտեխնիկական խնամք՝ 15.0 հա տարածքի վրա:

«Թեղուտ» ՓԲԸ-ի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են անտառմշակույթների հիմնադրում 61.9 հա տարածքում և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամք՝ 214 հա տարածքի վրա:

15. <u>Վարկային ծրագրեր</u>

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում 2017 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ըստ բաղադրիչների կատարվել են հետևյալ աշխատանքները՝

«Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ» բաղադրիչի շրջանակներում՝

– 27 համայնքի արոտների կառավարման պլաններ հաստատվել են Համաշխարհային բանկի կողմից,

– 6 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 8 միավոր տրակտոր և իսկ 3 համայնքի կոոպերատիվներին՝ 3 միավոր գյուղատնտեսական գործիքներ,

– 10 համայնքում իրականացվում են արոտների ջրարբիացման համակարգերի կառուցման աշխատանքները (44.2 կմ ջրագիծ, 22 հատ խմոց)

«Արժեշղթայի զարգացման» բաղադրիչի շրջանակներում իրականացված 1-ին և 2-րդ փուլերի մրցույթների արդյունքում 2016-2017 թվականների ընթացքում իրականացվել է 26 ենթածրագիր:

2017 թվականի վեց ամիսների ընթացքում հատկացվել է 861.3 հազ. ԱՄՆ դոլար:

Նշված ենթածրագրերի իրականացման արդյունքում, նախատեսվում է գյուղմթերքի արտադրանքի ծավալների ավելացում 20-25 %-ով, արտահանման ծավալների աճ 10-15 %-ով, հայկական արտադրանքի բրենդի ստեղծում և արտահանման հնարավորությունների ընդլայնում, ձեռնարկությունների եկամուտների ավելացում և նոր աշխատատեղերի ստեղծում:

«Պետական կառույցների կարողությունների հզորացում» բաղադրիչի շրջանակնե-րում հանրապետության ֆերմերային տնտեսությունների շրջանում տեղական բարձրորակ սերմերի ու սածիլների պահանջարկը ապահովելու նպատակով վերանորոգվել են ՀՀ ԳՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի

3000մ^2 մակերեսով ապակեպատ ջերմատունը, ֆիտոպաթոլոգիայի լաբորատորիայի մասնաշենքն ու կաթսայատունը: Ավարտին է հասնում ևս 3000 մ^2 մակերեսով ապակեպատ ջերմատան կառուցման աշխատանքները:

Սննդի անվտանգության պետական ծառայության համար վերանորոգվել և վերազինվել է մասնաշենք, հնարավորություն ընձեռնելով կիրառել «մեկ պատուհան» սկզբունքով սպասարկումը:

«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի համար ձեռք է բերվել նորագույն լաբորատոր սարք, որը հնարավորություն է տալիս իրականացնել լայն սպեկտրի բարձրորակ լաբորատոր փորձաքննություններ:

Ավարտվել է Մեծ Պարնի համայնքի անասնաբուժական կլինիկայի կառուցման աշխատանքները:

Բաղադրիչի շրջանակներում 2017 թվականի վեց ամիսների ընթացքում իրականացվել է 327,656 ԱՄՆ դոլար:

2017 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել 1.8 մլրդ դրամի ներդրում:

16. <u>Ներգրավված ներդրումներ</u>

ՀՀ ագրոպարենային համակարգի 20 ընկերությունների կողմից 2017 թվականին նախատեսվել էր իրականացնել շուրջ 101.28 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ: 2017 թվականի առաջին կիսամյակի դրությամբ վերոնշյալ ընկերությունների կողմից կատարվել է շուրջ 29.98 մլն ԱՄՆ դոլար ներդրումներ:

Աշխատանքները շարունակվում են:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեությունն ուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը, արդյունքում՝ նախադրյալներ են ստեղծվել գյուղատնտեսության կայունության համար:

Գյուղատնտեսության ոլորտում որոշակի ձեռքբերումների հետ մեկտեղ առկա են բազմաթիվ խնդիրներ: Մասնավորապես, 2017 թվականին քաղաքականությունը շարունակվելու է ուղղվել հետևյալ առաջնահերթ խնդիրների լուծմանը.

- գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացմանը,
- սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի և գործիքակազմի արդյունավետության բարձրացմանը,

- բնակլիմայական աղետներից (երաշտ, կարկտահարություն և այլն) վնասների կանխարգելման նախադրյալների ստեղծմանը,
- պտղատու ինտենսիվ այգիների հիմնման խթանմանը,
- գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի խթանման ուղղությամբ միջոցառումների իրականացմանը,
- սուբսիդավորման մեխանիզմների կատարելագործմանը,
- գյուղատնտեսական խորհրդատվական և տեղեկատվական համակարգի բարելավմանը,
- անտառային ոլորտի բարեփոխումներին՝ ուղղված անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման վիճակի բարելավմանը,
- գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրմանը (կաթիլային ոռոգման համակարգեր, հակակարկտային ցանցեր, աշխարհագրական տվյալների թվայնացված համակարգեր),
- գյուղատնտեսական տեխնիկայի նորացման, սպասարկման և մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրմանը,
- գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման նախադրյալների ստեղծմանը:

Վերը նշված խնդիրների լուծումը նախադրյալներ կստեղծի առաջիկայում գյուղատնտեսության զարգացման և տնտեսական աճի ապահովման համար: